

Ἰδρυμα ระเบียบชาติ Լեզու সভ্যতা ՃՀԷԷ

inalco

Institut national
des langues
et civilisations orientales

Département Eurasie



Միջազգային Հայագիտական Մաստեր (IMAS)

Դասընթացի պատասխանատու : Փրոֆ. Անահիտ Տոնապետյան-Տեմուխյան

Contact : master.international@etudes-armeniennes.org

2023-2024

04/04/2023 թվականի, ոչ պարտադրյալ գրքոյկ
Մինչև վերամուտ փոփոխության ենթակա

immas

International Master in Armenian Studies

Ἰδρυμα

แห่งชาติ

Լեզու

সভ্যতা

ՃՀԷԷ

inalco

Բովանդակություն

Ընդհանուր Ներկայացում	3
ԻՆԱԼԹՕ	3
Հայագիտությունը Ինալթոյի մեջ	3
Ուսուցչական Յանձնակազմ	4
Հայագիտական Միջազգային Մասսեր (IMAS)	4
Թեկնածություն եւ արձանագրություն	5
Մասսեր 1 ընդունման համար`	5
Մասսերի 2-րդ տարի ընդունման համար`	6
Արձանագրության գործընթացը (երկու փուլով)	6
Ուսանողական գործուղումներ	7
IMAS ՄասսերԷն ետք ասպարեզի կարելիություններ	7
Գործնական տեղեկություն	7
Բաժանմունքի քարտուղարություն	7
IMAS-ի ուսուցման պայմաններ	8
Համալսարանական ժամանակացույց	8
Հայագիտության հետ առնչուող կրթաթոշակներ	8
Հանրակացարան	8
Գործնական յղումներ	8
Դասընթացի կառույցը	10

Ընդհանուր Ներկայացում

ԻՆԱԼՔՕ

ԻՆԱԼՔՕ՝ բարձրագույն պետական հաստատություն է, ան կը յաջորդէ 1795-ին հիմնուած *Ecole Spéciale des Langues Orientales Vivantes-ին*, ուր հայերէնը դասաւանդուած է 1798-էն սկսեալ. Այժմ Եւրոպայի մէջ, եւ Նոյնիսկ աշխարհի մէջ եզակի հաստատություն կը համարուի՝ Նուազ տարածուած լեզուներու եւ քաղաքակրթութիւններուն ուսումնասիրութեան համար: Ինալքոյի մէջ կը դասաւանդուին հարիւրէ աւելի լեզուներ եւ անոնց համապատասխանող երկիրներու ժամանակակից ընկերային եւ քաղաքական հարցերը: Համբաւաւոր համալսարանական եւ հետազոտական ցանցի անդամ՝ Alliance Sorbonne Paris Cité-ի, Centre National de Recherche Scientifiqueի (CNRS), Ֆրանսախօս համալսարանական Գործակալութեան (Agence Universitaire de la Francophonie), Erasmus + ցանց, Ինալքօն Նաեւ աշխարհի զանազան համալսարաններու հետ կը համագործակցի:

Ինալքօն կը շնորհէ պետութեան կողմէ ճանաչում վայելող վկայականներ (Licence, Master, Doctorat), ըստ 1998-էն ի վեր ի զօրու եւրոպական չափանիշներու, Ինալքոյին շնորհած ECTS վարկանիշերը (credits) կարելի է արժեւորել եւրոպական բարձրագույն կրթութեան համակարգի որեւէ երկրի մէջ:

Արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութեանց հիմնարկ (INALCO)

[Pôle des Langues et Civilisations](#)

65 rue des Grands Moulins, 75013 Paris

Հեռ. +33 (0)1 81 70 10 00.

ճամբայ՝ Մէթրօ գիծ թիւ 14 կամ RER C, կայան՝ « Bibliothèque François Mitterrand » ; օթօպիւս 89 եւ 62, կանգառ « Bibliothèque Rue Mann » ; հանրակառք (tram) 3a, կանգառ՝ « Avenue de France ».

Ինալքոյի հետազոտութեանց կեդրոն (Maison de la Recherche)

2 rue de Lille, 75007 Paris

ճամբայ՝ : Մէթրօ գիծ 1 կամ 7, կայան « Palais-Royal – Musée du Louvre », գիծ 4, կայան « Saint Germain-des-Prés », գիծ 12, կայան « Rue du Bac », RER C կայան « Musée d'Orsay » ; օթօպիւս 24, 27, 39, 68, 69, 95 - կանգառ Pont du Carrousel

<http://www.inalco.fr>

Հայագիտութիւնը Ինալքոյի մէջ

Ինալքոյի հայագիտական բաժանմունքը կ'առաջարկէ Հայաստանէն դուրս ամենաընդարձակ հայագիտական ծրագիրը, մասնագիտութիւններու մեծ քանակով (լեզու, լեզուաբանութիւն, հին, միջնադարեան, արդի եւ ժամանակակից պատմութիւն, արուեստի պատմութիւն, ընկերբանութիւն-մարդաբանութիւն, գրականութիւն եւ թարգմանութիւն): Ուսանողը Bachelor/Licence-էն սկսելով կը հասնի մինչեւ հայագիտական PhD/doctorat: Կ'ընդունուին հայերէնի մէջ սկսնակներ, ինչպէս նաեւ զանազան աստիճանի հայախօս ուսանողներ: Ինալքոյի վկայականները կը ներառեն հետազոտական եւ/կամ արհեստավարժական ասպարեզի պատրաստութիւն:

Ներկայ առցանց Մաստերի ծրագիրը ստեղծուած է նկատի առնելով բարձր հայագիտական վկայական ստանալու պահանջքը, նաեւ ֆրանսերէնին չտիրապետող անձերու կողմէ:

Ամբողջ աշխարհի ուսանողներու մատչելի կը դարձնէ ճանաչում վայելող դասախօսներու յանձնակազմին հմուտութիւններն ու փորձառութիւնը: Եզակի շրջանակ կը ստեղծէ հայախօս ուսանողներու արեւմտահայերէն լեզուով մտային եւ արհեստավարժական գործունեութիւն վարելու համար միջազգային ուսանողական խումբի մը ծիրէն ներս:

Կը ներառնէ 2017-էն ի վեր գոյութիւն ունեցող դասեր, որ մաս կը կազմեն Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկին հետ համագործակցութեամբ ստեղծուած *Արեւմտահայերէնի ուսուցում սփիւռքի մէջ* յատուկ վկայականին (30 credits) եւ թոյլ կու տայ այս միաւորները արժեւորելու եւրոպական ճանաչողութիւն վայելող Մաստերի (120 credits) ծիրէն ներս:

Ուսուցչական անձնակազմ

Ինալթրոյի մշտական դասախոսներ

[Անահիտ Տոնապետյան-Տեմոփոլյու](#) Full Professor, Doctor of Linguistics (հայերենի լեզուաբանություն, մասնագիտության պատասխանատու)

[Վիկտորիա Խուրշուդյան](#), Associate Professor, Doctor of Linguistics (արեւելահայերեն եւ լեզուաբանություն)

[Մելանի Գրճեան](#), Certified Teacher (արեւմտահայերեն)

[Աննա Լեյոյեան](#), Associate Professor, Doctor of Art History (Ռուսիոյ եւ Կովկասի Արուեստ Arts, Eurasia and Russia departments)

[Թալին Տեր Մինասեան](#), Full Professor, Doctor of History (Ռուսիոյ եւ Կովկասի քաղաքական եւ ընկերային պատմություն, Eurasia and Russia departments)

Chargés de cours

[Քրիստինա Բատիկեան](#) (Հայ գրականություն, ստեղծագործ գրություն եւ ընթերցում)

[Անգր ալ Պաթայնէ](#), Doctor of Linguistics, Professor at Western Governors University (Մեթոսաբանություն, աշակերտակերոն մանկավարժություն)

[Միքայել Նշանեան](#), Doctor of History, Bibliothèque Nationale de France (Միջնադարեան եւ Արդի Հայոց Պատմություն)

[Ազնէս Ուզունունեան](#), Doctor of Linguistics, Ինստիտուտ Կաթոլիկ Եւրոպայի (Գրաբար)

[Նազյո Թեմիր-Պելերեան](#), Doctor of Sociology (ընկերբանություն-մարդաբանություն)

Միջազգային Մաստերին կցուած դասախոսներ

[Վայելթինա Գայգուարի](#) Full Professor, Հայագիտության ամպիոն, Ժնևեի Համալսարան (դասական բանասիրություն, հին եւ արդի հայ գրականություն, գաղափարներու պատմություն)

[Վերա Եագուպեան](#), Քաղաքագետ, Պելյուրե (Խաչիկ Տեր Ղուկասեանի մասնակցու)

[Ժիրար Մայխասեան](#), փիլիսոփայ, գրող, Փարիզ

[Վահէ Թաշճեան](#), Doctor of History, Պերլին, Միջին Արեւելքի պատմության մասնագետ, Յուշամատենան Ծրագրի տնօրէն

[Հրայ Զիլինկիրեան/ratch](#), Associate Professor, Օքսֆորդի համալսարան

[Շահան Վիտայ-Կորէն](#), Doctor at l'Ecole des Chartes, Digital humanist

Հայագիտական Միջազգային Մաստեր (IMAS)

IMAS Միջազգային Մաստերը (International MA in Armenian Studies) հայալեզու դասաւանդութեան հեռակայ ծրագիր է, որուն նպատակը ձեռք բերել է հետեւեալ գիտելիքներն ու կարողութիւնները՝

- Ամբողջացնել եւ խորացնել ուսանողին գիտելիքները՝ հայոց աշխարհի (Սփիւռք եւ Հայաստան) լեզուական եւ մշակութային իրողութիւններու ու պատկերացումներու մասին, իրենց պատմական եւ այժմեական այլազանութեամբ:
- Հետեւաբար, անձնական մտածողութիւն կազմել այժմեական հայկական աշխարհի համապատասխան հարցերուն շուրջ:
- Կարողանալ հայերէն լեզուով աշխատիլ տարբեր ոլորտներու մէջ (կրթութիւն, մշակոյթ, հաստատութիւններ, լրագրողական, հրատարակչական, մարդասիրական, ընկերային կամ գործառական միջավայր): Կարգ մը դասեր նախատեսուած են Սփիւռքի հայկական դպրոցներու ուսուցիչ/ուսուցչուհիներու կատարելագործման համար:
- Կողմնորոշուիլ Սփիւռքի ցանցերուն մէջ եւ կապեր հաստատել հայկական կառոյցներուն հետ:
- Հեռակայ աշխատակցիլ, անդրազգային ցանցի մը մաս կազմել, հայերէնով տիրապետել թուային միջոցներուն:
- Հայերէն լեզուով անհատական կամ հաւաքական ծրագիրներ (մշակութային, մանկավարժական, կրթական, ընկերային, մարդասիրական եւայլ) յղանալ եւ գործադրել:
- Այս դասընթացքը կ'աւարտի աշխատանքային միջավայրի մէջ կատարուած փորձաշրջանով մը, կամ ծրագրի մը կատարումով (անձնական կամ հաւաքական): Փորձաշրջանը կ'աւարտի

հաշուետուութեան գրաւոր աշխատանքով մը եւ յանձնախումբի առջեւ անոր ներկայացումով: Փորձաշրջանին տեղ գրաւոր հետազոտական աշխատանք¹ մը յանձնելը կարելի է միայն եթէ ուսանողը ի վիճակի է փաստել որ որեւէ մարզի մէջ հետազոտական աշխատանքի մեթոտներուն ծանօթ է, եւ եթէ նախօրօք Ինալթոյէն ներս ղեկավարի մը համաձայնութիւնը ստացած է: (արձանագրութեան թղթածրարը լրացնելէ առաջ խորհրդակցիլ Ա. Տոնապետեանի հետ):

Շնորհուած վկայականը` «Հայագիտական Միջազգային Մաստեր»ը (« Master international en études arméniennes ») կը համարուի ընդհանուր *Master Langues, littératures et civilisations étrangères et régionales (LLCER) Eurasie/Arménien*-ի տարբերակներէն մէկը.

Թեկնածութիւն եւ արձանագրութիւն

Դասընթացքը **տարեկան 15 ուսանող** կ'ընդունի: Դասախօսներու յանձնակազմը ընդունելութիւնները կը կատարէ ըստ թեկնածուներուն ներկայացուցած դիմումագիրին եւ ըստ դիմողներու քանակին: Դիմումագիրը կը բաղկանայ հետեւեալ փաստաթուղթերէն`

- Արձանագրութեան ծրարը ֆրանսերէն կամ անգլերէն (առցանց [E-candidat](#) կայքէն):
- Նախապէս ստացած վկայական, վկայագիր, նիշերու եւ դասերու ցուցակը : Հարկ է հայերէնէ, ֆրանսերէնէ, անգլերէնէ կամ ռուսերէնէ բացի, այլ լեզուներով վկայականները վաւերացուած թարգմանութեամբ ներկայացնել:
- Բացատրական նամակ, որ պէտք է ներկայացնէ թեկնածուին համալսարանական վկայականները եւ/կամ աշխատանքային ասպարեզի հանգրուանները, եւ պատճառաբանէ դասընթացքին հետ կապուած իր հետաքրքրութիւնները կամ ակնկալիքները: Այս նամակը նախատեսուած է նաեւ թեկնածուին գրաւոր ձեւով յստակօրէն եւ խնամքով արտայայտուելու կարողութիւնը ճշդելու (հայերէն, ֆրանսերէն կամ անգլերէն լեզուներով):
- Կենսագրութիւն (CV) (հայերէն, ֆրանսերէն կամ անգլերէն լեզուներով):

Նուագագոյն պահանջուած համալսարանական աստիճան

- Licence, Bachelor կամ համարժէք վկայական (3 տարի, 120 վարկանիշ (crédit), բնասիրական բնագաւառի, մշակութային կամ ընկերային ասպարեզի մէջ (լեզու, գրականութիւն, ընկերբանութիւն, լրագրութիւն, կրթութիւն, հրատարակչութիւն, բարեգործական/մարդասիրական ասպարեզ, հոգեբանութիւն, Աստուածաբանութիւն Էւայլն)

ԿԱՄ

- Որեւէ բնագաւառի Licence կամ Bachelor ԵՒ դասընթացքին համապատասխանող ասպարեզի մէջ առնուզն 5 տարուայ գործունեութեան փաստ:

ԿԱՄ

Առանց պահանջուած վկայականներու թեկնածուները, որոնք դասընթացքին համապատասխանող բնագաւառի մէջ կրնան նշանակալից գործունեութիւն փաստել, կարելիութիւնը ունին դիմելու [formation continue de l'Inalco](#) գրասենեակին իրենց փորձառութիւնը արժեւորելու համար վկայականի փոխարէն (վճարովի եւ մէկ տարի առաջուընէ նախատեսելի դիմում)

Պահանջուած լեզուական ունակութիւն

- հայերէն (արեւմտահայերէն կամ արեւելահայերէն). լեզուներու եւրոպական դասակարգման C1 սահուն իմացութիւն. թղթածրարին կցել լեզուի ունակութիւնը կամ փորձառութիւնը (դպրոց, բնակավայր, ասպարեզ եւայլն) ցոյց տուուղ որեւէ փաստաթուղթ: Այլ լեզուի իմացութիւն չի պահանջուիր:

Մաստեր 1 ընդունման համար`

Թեկնածութեան շրջանը կը սկսի 21 Ապրիլ 2023

Թեկնածութեան ժամկէտ տե՛ս [E-candidat](#)

¹ Հետազոտական աշխատանքով աւարտած Մաստերի ուսանողները կրնան յետագային տոքթորական ծրագրի (PhD) ընդունուիլ, նուագագոյն նիշ ստանալու պայմանաւ (տե՛սէք [page de l'école doctorale](#)):

Մաստեր 1ի թեկնածուութիւն : Տեսէ՛ք Ինալքոյի կայքը :

<http://www.inalco.fr/formations/inscrire-inalco/master-demande-admission>

Ոչ-ֆրանսախօս ուսանողները օգնութեան համար կրնան դիմել՝ master.international@etudes-armeniennes.org: Հայերէնով բացատրական տեսահոլովակներ կը տրամադրուին [Armenian at Inalco](#) կայքէջին վրայ:

LLCER Մ1-ի ընդունման համար, դիմումագիրը քննելէ ետք, յանձնաժողովը կրնայ թեկնածուն հրաւիրել հանդիպումի մը իր լեզուական ունակութիւնները ստուգելու նպատակով: Հրաւերը կը դրկուի իմակով:

Ընդունուելու պարագային, ուսանողը նախ պետք է իր թեկնածութիւնը հաստատէ, ետքը կատարէ վարչական արձանագրութիւնը եւ դասերու արձանագրութիւնը:

Մաստերի 2-րդ տարի ընդունման համար՝

Մ1 ամբողջութեամբ աւարտելու պարագային, ուսանողը Մ2 անցնելու իրաւունքը կը ստանայ առանց որեւէ դիմում կատարելու:

Այն ուսանողները որոնք այլ վկայական արժեւորելով կը փափաքին անմիջապէս Մ2 մտնել (այլ համալսարանի Մաստեր կամ աւելի բարձր աստիճան, ԻՆԱԼԲՈՅԻ հայերէնի DLC4) կրնան կապուիլ [դասընթացքի պատասխանատու](#)ին հետ դիմումը ներկայացնելէ առաջ:

Արձանագրութեան գործընթացը (երկու փուլով)

Ընդունման յանձնախումբի դրական պատասխան ստանալէ ետք, ուսանողը արձանագրութիւնը կը կատարէ **երկու փուլով**, որոնց ֆրանսերէն անունը օգտակար է յիշել՝

- 1) *Inscription administrative* (IA)՝ « վարչական արձանագրութիւն » (ծրագրի ուսանողի կարգավիճակը ստանալու նպատակով) կ'ենթադրէ **առցանց հարցաթերթիկի** լրացում եւ **տարեկան սակի** վճարում, որուն արդիւնքով ուսանողական քարտը կը տրուի:
Կապ՝ scolarite@inalco.fr
- 2) *Inscription pédagogique* (IP), « դասերու արձանագրութիւն » որմով ուսանողը կը հաստատէ իր հետեւելիք **առարկաներուն ցանկը** (պարտադիր եւ ընտրովի), դասերուն եւ քննութիւններուն մասնակցելու իրաւունքը ստանալով:
Կապ՝ bureau-master@inalco.fr

Արձանագրութեան սակը՝

Տարեվճարի ընդհանուր գումարը 350 €-ի շուրջ է:

Կ'ընդգրկէ՝

- Պետական պարտադիր մասնակցութիւն (Formation Continue-ի գծով արձանագրութեան չի վերաբերիր)՝ **95€** 2022-2023ին:
Վճարումը կը կատարուի [CVEC](#) կայքէջէն, ընդունուելէ ետք եւ Ինալքո արձանագրուելէ առաջ:
- Ինալքոյին վճարուելիք Մաստերի IA արձանագրութեան սակին վերաբերեալ, Ինալքոն առայժմ չի կիրարկեր պետութեան կողմէ որոշուած Երոպական Միութեան մաս չկազմող երկիրներու քաղաքացիներուն յաւելեալ սակը (3770€): Որպէս առցանց ծրագիր 2022-2023-Էն Ինալքոն ամբողջութեամբ իր վրայ լը վերցնէ տարբերութիւնը եւ բոլոր ուսանողներու համար կը կիրարկէ նոյն սակը, որ պետութեան կողմէ կը որոշուի ամաժնային ամիսներուն, եւ որ մոտաւորապէս **250€** է: ԻՄԱՍ ծրագիրը ներքին կարգով կրթաթոշակի նպաստի ծրագիր չունի:
Վճարումը կը կատարուի Ինալքոյին՝ PAYBOX համակարգէն: Ուսանողը յղումը կը ստանայ ելեկտրոնային փոստով IA-ի առցանց հարցաթերթիկը լրացնելէն ետք:
- Ինալքոյի սակը կ'ընդգրկէ BULAC գրադարանին արձանագրութեան վճարումը, սակայն ելեկտրոնային աղբիւրներէ օգտուելու համար անհրաժեշտ է տարեկան մէկ անգամ նետկայանալ գրադարանի արձանագրութեան գրասեղանին:

Վճարումը կատարելէ անմիջապէս ետք, ուսանողները կը ստանան թուային հաշիւ ստեղծելու համար տեղեկութիւններ: Այդ հաշիւը դասերու արձանագրութեան (IP) հանգրուանին համար անհրաժեշտ է, ինչպէս նաեւ խիշերուն հետեւելու, եւ MOODLE հարթակին միանալու:

Դասերու արձանագրութիւնը (IP) դասերուն սկսելէ առաջ կատարելը անհրաժեշտ է MOODLE հարթակին միանալու համար: Աւելի մանրամասն տե՛ս՝ <http://www.inalco.fr/formations/inscrire-inalco>

Ուսանողական գործուղումներ

Ինալքոն այս նպատակով յատուկ կրթաթոշակներ կը տրամադրե, տարբեր ծրագիրներու ծիրէն ներս: **Cursus Intégré** Կարելիութիւն կը ստեղծեն Ինալքոյի դասընթացքի ծիրէն ներս մէկ կիսամեակ Ինալքոյի հետ համաձայնագիր կնքած արտասահմանեան համալսարան մը ուսանիլ:

Միջազգային փորձաշրջան Չվճարող փորձաշրջանի պարագային, ճամբու կամ կեցութեան ծախսին մէկ մասը կարելի է ստանալ:

Հետազոտական կեցութիւն` (հետազոտական Մաստերի պարագային) երկուքէն վեց շաբաթ (համալսարանական արձակուրդին), ղեկավարին համաձայնութեամբ:

Այս կրթաթոշակներուն հարկ է դիմել առաջին կիսամեակի աւարտին:

Աւելի մանրամասն տե՛ս` <http://www.inalco.fr/international/etudiants-inalco>

Ինալքոն Erasmus + համաձայնագրեր կնքած է տարբեր երկիրներու համալսարաններու հետ, որոնց ծրագիրները հայագիտութեան հետ առնչուած են (Ընդգծուած հաստատութիւնները նաեւ ներկայ IMAS ծրագիրին մասնակիցներ են)`

- Զայաստան (Երեւանի Պետական Զամալսարան, Երեւանի Բոյուսովի անուան պետական լեզուահասարակագիտական համալսարան)
- Կիպրոս (Cyprus University),
- **Մեծն Բրիտանիա (Oxford)**
- **Յունաստան (Athens Kapodistrian University),**
- Զունգարիա ([Pázmány Péter Catholic University](#)),
- Իտալիա (l'Orientale Napoli, Ca' Foscari Venice),
- Լիբանան (Université Saint Joseph, Զայկազեան Զամալսարան)
- **Չուվցերիա (Université de Genève),**
- Թուրքիա (Boğaziçi Üniversitesi)

[Relations Internationales սպասարկութեան մօտ](#) ստուգել [այս համաձայնագրերու ի գորու ըլլալը](#)

IMAS Մաստերէն ետք ասպարեզի կարելիութիւններ

IMAS Մաստերը հնարաւորութիւններ կը բանայ գործի ասպարեզ մուտք գործելու կամ յառաջանալու, օրինակ հետեւեալ մարզերուն մէջ`

- Զրատարակչութիւն եւ Մամուլ
- Զաղորդակցութիւն եւ համակարգչային ճարտարարուեստ
- Կրթութիւն (մանկավարժութիւն / վարչութիւն)
- Թարգմանութեան ասպարեզ
- Յատուկ կարիքով անձերու օժանդակութիւն, ընկերային օժանդակութիւն, մարդասիրական ասպարեզ, հոգեբանութիւն, կրօնական բնագաւառ
- Մշակոյթ եւ Ժամանց (ծրագիրի ղեկավարում, համայնքային կառոյցներու յանձնակազմ)
- Խորհրդատուութիւն եւ փորձագիտութիւն (պետութեան կամ ձեռնարկութիւններու մօտ)
- Ձեռնարկութիւն, Start-up

Գործնական տեղեկութիւն

Բաժանմունքի քարտուղարութիւն

Մաստերներու գրասենեակը կ'արձանագրե ուսանողին առարկաներու ցանկը եւ IA-ն կը հաստատէ contrat pédagogique-ի միջոցաւ: Նաեւ կ'արձանագրե դասախօսներուն յանձնած նիշերը եւ ուսանողին կիսամեակի վերջի արդիւնքի թերթիկը կը խմբագրե: bureau-master@inalco.fr

Ոչ-ֆրանսախօս ուսանողները քարտուղարուհիին հետ master.international@etudes-armeniennes.org-ի միջնորդութեամբ կը կապուին:

Յաւելեալ տեղեկութիւններ՝ շուտով տրամադրելի [Armenian at Inalco](#) եւ [IMAS](#) կայքէջերուն վրայ:

IMAS-ի ուսուցման պայմաններ

Ծրագիրը կը դասաւանդուի հայերէն լեզուով (հիմնականօրէն արեւմտահայերէն) եւ ամբողջութեամբ հեռակայ տրամադրելի է (համընթաց կամ ձայնագրումեամբ) (synchronous and asynchronous): Իւրաքանչիւր դասին նիւթերը արձանագրուած ուսանողներուն կը տրամադրուին Ինսթրիի [Moodle](#) հարթակին վրայ):

Համընթաց դասերուն պարագային, ժամանակացոյցը նախատեսուած է UTC -7Է (Գալիֆորնիա) UTC+4 (Հայաստան) ժամագոտիներուն յարմարելու համար (Փարիզեան ժամով 15:00-20:00).

Համալսարանական ժամանակացոյց

Ուսանողական կիսամեակը 13 շաբաթ կը տեւէ, Ա. Կիսամեակը՝ Սեպտեմբերէն մինչեւ Դեկտեմբեր (մէկ ընդմիջումով), Բ. Կիսամեակը՝ Փետրուարէն մինչեւ Մայիս (երկու ընդմիջումով): Յունուարը եւ Յունիսը քննութեանց շրջանն են, սակայն ըստ անհրաժեշտութեան որոշ դասեր կրնան նաեւ Յունուարին նախատեսուիլ:

Արժեւորումը կը կատարուի կիսամեակի ընթացքին յանձնուած աշխատանքներուն հիման վրայ, աւելի քան վերջնական քննութիւններով: Յունիսին անբաւարար արդիւնք ստացած ուսանողներուն աւելորդ քննութիւններու շրջան մը կ'առաջարկուի:

Ուսանողները կրնան իրենց նիշերուն ծանօթանալ Յունուարի վերջին եւ Մայիսի վերջին, իսկ վերջնական արդիւնքը Յունիսի վերջին յայտնի կը դառնայ: Վկայականներու բաշխումը տեղի կ'ունենայ յաջորդ ուսումնական տարուան ընթացքին եւ հանդիսութեան մը առիթ կու տայ:

Ժամանակացոյց՝ <http://www.inalco.fr/formations/emplois-temps-examens/calendrier-universitaire>

Ժողով եւ վերամուտի օր՝ <http://www.inalco.fr/formations/faire-rentree-inalco>

Վերամուտին ուսանողներուն նաեւ կը տրամադրուի յատուկ առցանց օրացոյց մը հայերէն լեզուով:

Հայագիտութեան հետ առնչուող կրթաթոշակներ

Գալուստ Կիլպէնկեան հաստատութիւն [Fondation Calouste Gulbenkian](#)

ՀԲԸՄ [AGBU / UGAB](#)

Ֆրանսահայ Կապոյտ Խաչ [Croix-Bleue des Arméniens de France](#)

Ըստ անձնական կացութեան կարելի է նաեւ դիմել՝

Աղքատախնամ [Association Arménienne d'aide sociale](#)

Լեա եւ Նափոլէոն Պիլիպեան Հիմնարկ [Bullukian](#) (Լիոն)

Հանրակացարան

Մաստերի տարիէն սկսեալ, ուսանողները կրնան Փարիզի Միջազգային Ոստանի Հայ Ուսանողներու Տուն դիմել [Maison des Etudiants Arméniens](#), նաեւ նիւթական օժանդակութեան ինդրանքով Մարի Նուպար Հաստատութեան Բարեկամներու ընկերակցութեան:

Գործնական յղումներ

• Հայագիտական բաժին՝ <http://www.inalco.fr/langue/armenien>

• Բաժանմունքի դասաւանդու գրքոյկներ՝ <http://www.inalco.fr/formations/departements-filieres-sections/eurasie/formations>

• Դասացուցակ՝ <https://planning.inalco.fr> (շուտով նաեւ IMAS Inalco Google Calendar հայերէն լեզուով)

• Քննութիւններու ծրագիր <http://www.inalco.fr/formations/emplois-temps-examens/examens>

- Moodle դասանիվթերու հարթակ : <https://moodle.inalco.fr>
- Թուային հարթակ Environnement numérique de travail (ENT) <https://ent.inalco.fr> (ուր քննութիւններէս ետք կարելի է նիշերուն հետեւիլ)
- Ընդհանուր կրթաթոշակներ եւ նպաստներ` <http://www.inalco.fr/vie-campus/soutien-accompagnement>
- Լեզուներու եւ Քաղաքակրթութիւններու գրադարան Bibliothèque universitaire des langues et civilisations (BULAC) <https://www.bulac.fr> (հայկական բաժնի պատասխանատու` Ադրինէ Չինալեան)

Դասընթացքի կառույցը

Մաստերը երկու ուսումնական տարի է կը բաղկանայ (Մաստեր 1 եւ 2), եւ **120 վարկանիշ/credits ECTS**-է (30/կիսամեակ): S7, S8, S9 կիսամեակները կը կազմուին իւրաքանչիւրը երեք աղիւսներէ (UE):

- Յառաջացած լեզուի ուսուցում (UE1),
- Հայագիտական (UE2)
- Օժանդակ գիտելիքներ եւ մեթոտներ (UE3)

S 9 կիսամեակին դասերէն մէկը կարելի է փոխարինել անձնական ծրագրով կամ ուղղորդուած դիտարկումի շրջանով:

S 10 ամբողջովին նուիրուած է փորձաշրջանին եւ իր հաշուետուութեան:

Այս աղիւսակը ի՞նչպէս կարդալ

UE 1ի բոլոր դասերը պարտադիր են

UE2 եւ UE3 ընտրովի առարկաներ կը պարունակեն: E, G եւ E/G կրճատումները կը նշեն յատուկ ուղղութեամբ առարկաներ

- **E**: Կրթական ուղղութիւն (Սփիւռքի դպրոցներու ուսուցիչներուն համար, որոնք այս դասընթացքին կը հետեւին իրենց ուսումը շարունակելու նպատակով): Չընտրել, եթէ այս նպատակով չէք ուսանիր:
- **E/G**, Բոլոր ուսանողներուն բաց առարկաներ, բաց կրթական ուղղութեան համար պարտադիր: Անպայման ընտրել, եթէ ուսուցիչ էք:
- **G**: Բոլորին համար ընտրովի առարկաներ:

Օրինակ`

Ուսուցիչ էք

- **S7-ին ընտրեցէ՛ք`**

UE1 Յառաջացած հայերէն 1, Հայերէն գրուածքի խտացում

UE2 Ընկերայնագրութեան, Հայոց Քրիստոնէութիւնը, Արեւմտահայերէնի մանկավարժական մարտահրաւերներ didactique + 2 ընտրովի առարկայ

UE3 Համակարգիչ եւ հայագիտութիւն

- **S8-ին ընտրեցէ՛ք`**

UE1 Յառաջացած հայերէն 2, Մամուլի լեզու,

UE2 Լեզուաբանական քերականութիւն, Աշակերտակեդրոն մանկավարժութիւն + UE2-էն 3 ընտրովի առարկայ

UE3 Օտար լեզու

- **S9-ին ընտրեցէ՛ք`**

UE1 Յառաջացած հայերէն 3, Ստեղծագործական շարադրութիւն

UE2 Կորպուսային լեզուաբանութիւն, Հայերէնի դասաւանդում + 3 ընտրովի առարկայ

UE3 Թուային օժանդակներ լեզուի դասաւանդութեան համար

Յատուկ պարագայ` ուսանողը նախապէս DLC4 արձանագրուած եղած է

Եթէ Նոյն վերնագրով առարկայի մը քննութիւնը արդէն անցուցած էք, չէք կրնար երկրորդ անգամ այս առարկան ընտրել: IP-ն կատարելու ժամանակ կապուեցէք master.international@etudes-armeniennes.org [հետ](#) ձեր նախկին ձեռքբերումները վաւերացնելու համար:

Մ1		ECTS	Ժամ / Շաբաթ	E /G
		60 / տարի		
Կիսամեակ 7		30		
ՍԵ1 – Յառաջացած հայերեն – 2 պարտադիր դաս		8	3,5	
ARMA410a	Յառաջացած հայերեն 1 (Մ.Գլրճեան)	4	2	G
ARMA410b	Հայերեն գրուածքի խտացում (Մ.Գլրճեան)	4	1,5	G
ՍԵ2 - Հայագիտութիւն – 5 ընտրովի դաս		20	7h30	
ARMA420d	Հայ գրականութիւն 1 (Զ. Բատիկեան) <i>Սփիւռքի հայ գրականութիւն՝ գլխաւոր հարցեր, ազդեցութիւն, հետքեր</i>	4	1,5	G
ARMA420g	Ընկերալեզուաբանութիւն եւ արեւմտահայերէնի փոխանցում (Ա. Տօնապետեան) <i>Դեր, գաղափարախօսութիւն, կենսունակութիւն՝ Ինչպէ՞ս փոխանցել արեւմտահայերէնը (դպրոցական շրջանակի մէջ եւ այլուր)</i>	4	1,5	E/G
ARMA420i	Հայ քրիստոնէութիւն՝ եկեղեցի, ընկերութիւն, քաղաքականութիւն (Յ. Զիլինկիրեան) <i>Հայոց եկեղեցիներուն կրօնական եւ քաղաքական մարտահրաւերներ Ե. դարէն մինչեւ այսօր: Կրօնական հաստատութիւնները եւ իրենց ազդեցութիւնը Հայաստանի եւ Սփիւռքի գաղութներուն վրայ:</i>	4	1,5	E/G
ARMA420j	Յետ-օսմանեան հայեր. աբսոր, մշակութային ժառանգութիւն եւ վերակառուցում (Վ. Թաշճեան) <i>Օսմանեան կայսրութենէն մինչեւ ազգ-պետութիւն համակարգ, մարդ, հաստատութիւն, պատկերացում, գաղափարախօսութիւն: Պատմական ծագում եւ ժամանակակից մարտահրաւերներ:</i>	4	1,5	G
ARMA420c	Հայ արուեստ (Ա. Լէյլոյեան) <i>Հայ արուեստի պատմութիւն : Ընդհանուր ակնարկ եւ օրինակներ (ծրագիրը ամէն տարի փոփոխութեան ենթակայ է)</i>	4	1,5	G
ARMA420h	Արեւմտահայերէնի մանկավարժական մարտահրաւերներ (Ա. Ալ-Պաթայնէ) <i>Աշակերտակեդրոն եւ գործօն մանկավարժութեան մարտահրաւերները: Շրջանակ, փորձառութիւն, քննադատական վերլուծում եւ եզրակացութիւններ</i>	4	1,5	E
ՍԵ3 – Օժանդակ գիտելիքը եւ մեթոտներ 1 (1 պարտադիր)		2	1,5 h	
ARMA430a	Համակարգիչ եւ հայագիտութիւն (Շ.Վիտալ-Կորէն) <i>Հայերէն լեզուով համակարգչային տարրական գործիքներու գործածութիւն: Համակարգչային հիմնական գիտելիքներ եւ հմտութիւններ՝ ուղղագրական սրբագրիչ, բառարան, շտեմարաններ, Էլայլ:</i>	2	1,5	G

Մ1		EC TS	Ժամ	E E/G
Կիսամեակ 8		30		
ՄԵ1 – Յառաջացած հայերեն – 2 պարտադիր դաս		8	3,5	
ARMB410a	Յառաջացած հայերեն 2 (Մ.Գլրճեան)	4	2	G
ARMB410b	Մամուլի լեզու (Ա. Տոնապետեան)	4	1 + TPE	G
ՄԵ2 - Հայագիտութիւն – 5 ընտրովի դաս		20	7h30	
ARMB420g	Հայերենի լեզուաբանական քերականութիւն (Ա. Տոնապետեան) <i>Տիպաբանութիւն, քերականական կարգերու ուսումնասիրութեամբ հասկնալ արեւմտահայերենի համակարգին յատկութիւնները եւ իր հետեւանքները գրականութեան համար եւ լեզուի դասաւանդումին համար:</i>	4	1,5	E/G
ARMB420b	Գրական թարգմանութեան մարտահրաւերները (Ա. Տոնապետեան) <i>Տեսական հիմքեր, բազմալեզու թարգմանութեան աշխատանոց (անգլերէն, ֆրանսերէն, յունարէն, արաբերէն, ռուսերէն), խմբային աշխատանոց:</i>	4	1,5 (1 + TPE)	G
ARMB420c	Թուրքիոյ Հայ Համայնքը: Ընկերբանութիւն եւ մարդաբանութիւն (Ն. Թէմիր-Պէյլերեան)	4	1,5	G
ARMB420h	Հայաստան-Սփիւռք՝ աշխարհա-քաղաքական մարտահրաւերներ (Վ. Եագուպեան, Խաչիկ Տէր Ղուկասեանի մասնակցութեամբ) <i>Հայաստանի աշխարհա-քաղաքական մարտահրաւերները եւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները, հեռանկարներ եւ արձագանգներ</i>	4	1,5	G
ARMB420i	Հայերէն գիրի եւ գիրքի պատմութիւն (ձեռագիր եւ տպագիր) (Վ. Գալցուարի) <i>Գրութեան եւ գրական գործունեութեան պատմութիւնը որպէս գաղափարներու եւ հայ ընտրանիներու պատմութեան արտացոլում (այբուբենի գիւտը, դպրութիւն եւ վանքեր Ե.-ԺԵ. դար, տպագրութիւն եւ վաճառական քաղքենիութիւն Ժ2 դարուն, մամուլ, արդի ժամանակի քաղաքական եւ գրական շարժում)</i>	4	1,5	G
ARMB420f	Աշակերտակեդրոն մանկավարժութիւն արեւմտահայերենի համար (Ա. Ալ-Պաթայնէ) <i>Ծրագիրով սորվիլ (Project Based Learning)՝ վերլուծել կարելիութիւններն ու խոչընդոտները, աշակերտները ներառնել ծրագրի մը շուրջ, առանցնացնել մանկավարժական միաւորներ թիրախ գիտելիքներով եւ հմտութիւններով, եւ ծրագիրը դասարանէն ներս կիրարկել:</i>	4	1,5	E
ՄԵ3 – Օժանդակ գիտելիքը եւ մեթոտներ 2 (1 ընտրովի)		2	1,5 h	
ARMB430a	Փորձաշրջան գտնել եւ ծրագիր կազմել (Ա. Տոնապետեան) <i>Սփիւռքի գործիչներու մասնակցութեամբ (Միջազգային հիմնարկներէ, մշակութային, քաղաքական, մարդասիրական ոչ-կառավարական կազմակերպութիւններու, կամ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու նուիրուած)</i>	2	1,5	G
ARMB430b	Օտար լեզուի խոհական իւրացում (Ա.Ալ-Պաթայնէ) <i>Վերլուծելով սորվողին փորձառութիւնը եւ դասաւանդողին ընտրութիւնները</i>	2	1,5	E

Մաստեր 2		EC TS		E E/G
Կիսամեակ 9		30		
UE1 – Յառաջացած հայերեն – 2 պարտադիր դաս		8	3,5	
ARMA510a	Յառաջացած հայերեն 3 (Մ. Գլըճեան)	4	2	G
ARMA510c	Ստեղծագործական շարադրութիւն (Ք. Բատիկեան)	4	1 + TPE	G
UE2 - Հայագիտութիւն – 5 ընտրովի դաս կամ 4 դաս եւ 1 անձնական ծրագիր / (նաեւ նախորդ տարին չընտրած դասերը կարելի է ընտրել, պատասխանատուին համաձայնութեամբ)		20	7h30	
ARMA520d	Հայ գրականութիւն 2 (Ք. Բատիկեան) <i>Երկու գրական երկերու խորացուած ուսումնասիրութիւն</i>	4	1,5 (1 + անձ. աշխ)	G
ARMA520g	Կորպուսային լեզուաբանութիւն՝ Մարտահրաւերներ եւ կիրարկում (Վ. Խուրշուդեան) <i>Շտեմարան/կորպուս կազմել նուազ տարածուած լեզուի համար՝ լեզուաբանական ճարտարագիտութիւն, կրթութիւն, արհեստական բանականութիւն: Մեթոտա-բանութիւն եւ մօտեցումներ:</i>	4	1,5	E/G
ARMA520h	Հայ Սփիւռք՝ հաստատութիւններ, ինքնութիւն եւ մշակոյթ: (Հ. Զիլինկիրեան) <i>Հայկական Սփիւռքը, համայնքներու պատմական եւ ժամանակակից մարտահրաւերներ (քաղաքական, ընկերային, մշակութային) իրենց շրջագիծին մէջ:</i>	4	1,5	G
ARMA520i	Հայերէրը եւ արդիականութիւնը՝ փիլիսոփաներ եւ մտածողներ (Ժ. Մալխասեան) <i>«Որոգայթ փառաց»-էն մինչեւ ժամանակակից մտածողները, հայ մտածողներուն տեղը իրենց շրջանակին եւ ժամանակաշրջանին մէջ:</i>	4	1,5	G
ARMA520k	Հայերէնի դասաւանդում կիրարկում (Ա.Ալ-Պաթայնէ) <i>Աշխատանոց դասարանային կամ արտադպրոցական ծրագրի նախապատրաստութեան համար (փորձաշրջանի նախապատրաստութիւն)</i>	4	1,5	E
ARMA520l	Անձնական ծրագրի իրագործում (թարգմանութիւն, հրատարակութիւն, կայքէջ, աղբիւրներու պատշաճեցում կամ իրագործում):	4		G
ARMA520m	Ուղղորդուած դիտարկում (ուսուցիչներ՝ ամառնային ճամբար Ա. Կարմիրեանի ղեկավարութեամբ)	4		E
ARMA520j	Հայագիտութեան արդի հարցեր (Հիւր դասախօս) <i>Այս դասը ամէն տարի հիւր դասախօսի մը կողմէ կը դասաւանդուի: Վերնագիրը ամէն տարի վերամուտէն առաջ կայքէջին վրայ կը յայտարարուի:</i>	4	1,5	G
UE3 – Օժանդակ գիտելիքներ եւ մեթոտներ 3 (au choix)		2	1,5 h	
ARMA530b	«Թուային մարդկայնականութեան» մեթոտները հայագիտութեան համար (Շ. Վիտալ-Կորէն) <i>Առաջին տարուան դասի խորացում, արհեստական բանականութեան (artificial intelligence) ներածական, Կորպուսային լեզուաբանութեան հետ առնչութիւններ:</i>	2	1,5	G
ARMA530a	Թուային մեթոտներ լեզուի դասաւանդումի համար (Ա. Ալ-Պաթայնէ)	2	1,5	E

Մաստեր 2	ECTS	Շաբաթա կան դասաժամ
Կիսամեակ 10	30	
UE1 – Փորձաշրջան / Ծրագիր եւ գրաւոր հաշուետուութիւն ARMB510	30	
<p>Փորձաշրջանները հաստատութիւններու, կազմակերպութիւններու, հիմնարկներու, դպրոցներու կամ ընկերութիւններու մէջ տեղի կ'ունենան, ուսանողը զանոնք դասախօսներու կազմին հետ համաձայնելով կ'ընտրէ նախորդ տարուընէ իսկ, յատուկ դասի մը օգնութեամբ (կիսամեակ 8, Ա.Տօնապետեան):</p> <p>Փորձաշրջանի տեւողութիւնը (առնուազն 3 ամիս / 200 ժամ) կախեալ է բովանդակութենէն եւ կազմակերպութենէն, կը ճշդուի ուսանողին, հիւրընկալող հաստատութեան եւ դասախօսներու կազմին միջեւ:</p> <p>Կիսամեակի աւարտին ուսանողը փորձաշրջանին վերաբերեալ հայերէնով գրաւոր աշխատանք կը ներկայացնէ եւ հեռակայ կը զեկուցէ անոր մասին երեք հոգիէ բաղկացած դասախօսներու յանձնախումբի առջեւ, որուն կրնայ միանալ հիւրընկալող հաստատութենէն ներկայացուցիչ մը:</p> <p>Ամսական պարտադիր սեմինար (Ա. Տօնապետեան) տեղի կ'ունենայ երկրորդ կիսամեակին ընթացքին ուսանողներուն փորձառութիւնը կիսելու համար եւ գրաւոր աշխատանքի շարադրութեան ուղղութիւններ տալու համար:</p> <p>Ուսանողները կարելիութիւն ունին փորձաշրջանի փոխարէն այլ ուսանողներու կամ շրջանաւարտներու, կամ ալ ուրիշ հաստատութենէ արհեստավարժներու հետ հաւաքական ծրագիր մշակելու: Այս ծրագրին յղացումը պէտք է մանրամասն ներկայացուի (նպատակ, իրագործելիութիւն, մեթոտաբանութիւն, կիրարկուած գիտելիքներ, գործի բաժանում) եւ դասախօսներու կազմին կողմէ ընդունուի նախ քան հաստատուիլը:</p> <p>Ուսանողները պէտք է իրենց փորձաշրջանի/ծրագրի նպատակը ընդունման ներկայացնեն ամենէն ուշը Դեկտեմբերի սկիզբը: Փորձաշրջանը կրնայ Յունուարին սկսիլ եւ ամենաուշը Օգոստոսի վերջին աւարտիլ:</p> <p>Հաշուետուութիւններու ներկայացումը տեղի կ'ունենայ Յունիսի եւ Նոյեմբերը միջեւ, ըստ փորձաշրջանի ժամանակացոյցին:</p>		